

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔ

«ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»  
Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի  
(այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝  
հետևյալ բովանդակությամբ.

«Բանկ, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն,  
ներդրումային ընկերություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ֆոնդի  
կառավարիչ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների  
ստեղծման, գործունեության կարգավորման, վերակազմակերպման, լուծարման, ինչպես նաև  
դրանց իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան  
օրենքներով:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 9.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝  
«Հոդված 9.1. Չկայացած ընկերությունը

1. Ընկերությունը համարվում է չկայացած՝

ա) եթե հիմնադիրների (հիմնադրի) կողմից Ընկերության հիմնադրման մասին որոշումն  
ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում Ընկերությունը սահմանված կարգով չի գրանցվել:  
Ընդ որում, սույն կետով սահմանված ժամկետում չի հաշվարկվում Հայաստանի  
Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Ընկերությանը լիցենզիայի նախնական  
համաձայնության տրամադրման կամ գրանցման ժամկետները կասեցնելու  
ժամանակահատվածը.

բ) Ընկերության պետական գրանցումը մերժվելու դեպքում (եթե մերժումը երեք ամսվա  
ընթացքում չի բողոքարկվել դատարան, կամ բողոքը մերժվել է, և այդ որոշումը մտել է  
օրինական ուժի մեջ).

գ) բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային  
ֆոնդի կառավարիչի, ապահովագրական ընկերության կամ վճարահաշվարկային  
կազմակերպության կողմից օրենքով սահմանված ժամկետում լիցենզիայի տրամադրման  
միջնորդագիր չներկայացվելու (այդ թվում՝ նախորդ միջնորդագիրը մերժվելուց հետո) հիմքով  
նրա գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում:

2. Չկայացած Ընկերության հիմնադիրներին (մասնակիցներին) ներդրված ավանդները  
վերադարձվում են Ընկերության ստեղծման (լիցենզավորման) հետ կապված  
պարտավորությունների նկատմամբ պատասխանատվությունն ըստ հիմնադիրների  
(մասնակիցների) բաշխելուց հետո՝ համաձայն Ընկերության հիմնադրման մասին  
պայմանագրի (Ընկերության կանոնադրության):»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքը լրացնել 11.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.  
«Հոդված 11.1 Ընկերության մասնակիցների ռեեստրը

1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին արգելվում է անձամբ վարել իրենց մասնակիցների ռեեստրը, և դրանց ռեեստրի վարումը նրանց կողմից պետք է հանձնվի «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով իրենց հետ փոխկապակցված անձ չհամարվող մասնագիտացված կազմակերպությանը, որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր: Ռեեստրում նշվում են յուրաքանչյուր գրանցված անձի (մասնակցի, անվանատիրոջ) մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:

2. Ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնած Ընկերությունն ազատվում է այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից:

3. Մասնակիցները, անվանատերերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող սույն հոդվածով նախատեսված տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները մասնակցի, անվանատիրոջ կողմից չներկայացնելու դեպքում Ընկերությունը և ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում բաժնետիրոջը պատճառված վնասի համար:

4. Ընկերության մասնակիցների ռեեստրում գրառումը կատարվում է Ընկերության մասնակցի կամ անվանատիրոջ պահանջով՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Ռեեստրում գրառում կատարելու մերժում չի թույլատրվում, բացառությամբ օրենքով և իրավական ակտերով սահմանված դեպքերի: Նման մերժման դեպքում ռեեստր վարողը դրանում գրառում կատարելու պահանջը ներկայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրառում պահանջող անձին հիմնավորված ծանուցում է մերժման մասին: Ռեեստրում գրառման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ռեեստր վարողը պարտավոր է համապատասխան գրառում կատարել դրանում:

6. Ընկերության մասնակցի, անվանատիրոջ պահանջով Ընկերության մասնակիցների ռեեստր վարողը պարտավոր է հաստատել Ընկերության մասնակցի, անվանատիրոջ սեփականության իրավունքը՝ այդ անձին ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով, որում նշվում են՝

ա) Ընկերության պետական գրանցման տվյալները, լրիվ ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը.

բ) կանոնադրական կապիտալի չափը.

գ) բաժնեմասի պետական գրանցման համարը, եթե «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն դրանք ենթակա են պետական գրանցման.

դ) բաժնեմասերի թիվը (քանակը), յուրաքանչյուր բաժնեմասի արժեքը, մասը կամ տոկոսը.

ե) քաղվածքը տալու տարին, ամիսը, ամսաթիվը.

զ) մասնակցի, անվանատիրոջ լրիվ անվանումը (ֆիզիկական անձանց համար՝ անունը).

է) ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությունը (կամ ֆաքսիմիլային վերարտադրությունը), ինչպես

նաև այդ կազմակերպության պետական գրանցման տվյալները, լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

ը) Ընկերության ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության կնիքի դրոշմվածքը.

թ) այլ տեղեկություններ՝ քաղվածք պահանջող անձի դիմումով:

Ընկերության մասնակիցների ռեեստրից քաղվածքը արժեթուղթ չի հանդիսանում:

7. Ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո Ընկերության մասնակիցների բաժնեմասերը պետք է գրանցվեն մասնակիցների ռեեստրի (գրանցամատյանի) մասնակիցների անձնական հաշիվներում՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան:

8. Ընկերության մասնակիցների ռեեստրի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող Ընկերությունների մասնակիցների ռեեստրի վարման կարգի, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:»:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում «և վարկային կազմակերպությունների» բառերը փոխարինել «, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների» բառերով:

Հոդված 6. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մաս շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ամենաուշը քսան օր առաջ այդ մասին ծանուցել ընկերության մասնակիցներին՝ պատվիրված նամակն ուղարկելով ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նշված հասցեով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմվում է գործադիր մարմնի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնեմասերի մասին:

Եթե Ընկերության մասնակիցների ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

Ընկերության մասնակցի պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ

տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված մասնակիցների խախտված օրինական իրավունքներն ու շահերը վերականգնելու նպատակով:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: